Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն
2026, Vol. 17, No. 1 (49), մարտ, 50-60
https://doi.org/10.46991/BYSU.B/2026.17.1.050

ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ՄԵՏԱԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԻԲՐԵՎ ՀԵՏՄՈԴԵՌՆ ՊԱՏՄԱՎԵՊԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ*
Երևանի պետական համալսարան

Հոդվածում քննվում է հետմոդեռնիստական պատմավեպի քննության տեսությունը, որն առաջ է քաշել կանադացի տեսաբան Լինդա Հաթչոնը: Նա 1988 թվականին առաջարկել է «պատմագրական մետագեղարվեստականություն» (historiographic metafiction) եզրույթը՝ որպես քննության արդյունավետ միջոց այնպիսի վեպի, որը համատեղում է պատմությունն ու գեղարվեստական գրականությունը՝ բացահայտելով պատմությունը՝ որպես կառուցված պատում, այլ ոչ թե բացարձակ ճշմարտություն: Պատմագրական մետագեղարվեստականությունը միավորում է պատմական վեպի և մետագրական տարրերը: Այս տիպի գործերը հաճախ կասկածի տակ են դնում պատմության ներկայացման օբյեկտիվությունը՝ ընդգծելով, որ պատմությունը տեքստային է, կառուցվում է նարատիվների միջոցով և ենթակա է սուբյեկտիվ մեկնաբանությունների: Պահպանվում է գեղարվեստական ինքնավարությունը, և միաժամանակ տեքստը վերադարձվում է «աշխարհ», բայց ոչ թե «սովորական իրականություն», այլ դիսկուրսի «աշխարհ», տեքստերի և ինտերտեքստերի «աշխարհ»: Այս տեսակի վեպը ինքնավերլուծական է, ընդունում է իր սեփական գեղարվեստական բնույթը՝ հարցականի տակ դնելով պատմական ճշմարտությունը և պատմության գրվածքը: Այն օգտագործում է միջտեքստային, պարոդիկ և լեզվական խաղի տեխնիկաներ՝ ուսումնասիրելու համար, թե ինչպես են ձևավորվում պատմական նարատիվները, և մարտահրավեր նետելու պատմության ու գեղարվեստական գրականության միջև ավանդական տարբերակումներին:
Ուսումնասիրությունն արդիական է հայ գրականագիտության մեջ, քանի որ Լ. Հաթչոնի առաջարկած տեսությունը կարևոր գործիք կարող է դառնալ հետանկախության, մասնավորապես հետպատերազմյան տարիներին ստեղծված և ստեղծվող պատմական թեմատիկայով հետմոդեռնիստական բնույթի վեպերի քննության հարցում:

* **Հասմիկ Հակոբյան** – ԵՊՀ ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի ասպիրանտ
Асмик Акопян – аспирант кафедры истории и литературной теории армянской литературы имени акад. Гр. Тамразяна, ЕГУ
Hasmik Hakobyan – PhD student at YSU Chair of History and Literary Theory of Armenian Literature named after Acad. Hr. Tamrazyan
Էլ. փոստ՝ hasmikhakobyan1@gmail.com ORCID ID: https://orcid.org/0009-0007-2616-6761

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 07.10.2025
Գրախոսվել է՝ 13.10.2025
Հաստատվել է՝ 12.03.2026
© The Author(s) 2026

Բանալի բառեր – *հետմոդեռնիզմ, միջտեքստայնություն, Լինդա Հաթչոն, պատմագրական մետագեղարվեստականություն, մետապատմավեպ*

Ներածություն

Ինչպես հայտնի է, հետմոդեռնիզմն առաջացել է որպես հակազդեցություն մոդեռնիզմի՝ անհատի ամենակարողության, բառի հանդեպ հավատի, բացարձակի ձգտման և աշխարհը փոխելու կամքի դրսևորման գաղափարներին: Հետմոդեռնիզմը ժխտում է անհատի ամենակարողության գաղափարը, նրա հոգևոր սնուցման հիմնական աղբյուրը՝ մետաֆիզիկան: Անհատն առաջնորդվում է բնազդային իրականությամբ, անհնարին է ներսի ու դրսի աշխարհների տարբերակումը. կա միայն մեկ հարթություն՝ ֆիզիկական աշխարհը, որտեղ ամեն ինչ բաղկացած է նշաններից, և որտեղ արդեն առաջնային, հավաստի իրականությունը վաղուց ու անդառնալիորեն կորսված է, ուստի անհնարին է իրական, անկեղծ որևէ ապրում: Բացի այդ, հետմոդեռնիզմը մերժում է իմացաբանական ենթադրությունները, հերքում ընդունման տեսությունները՝ շեշտը դնելով ընդհանուր գաղափարախոսության սպառված դարաշրջանի նկարագրության վրա, որը լի է պարադոքսներով, ոճերի բազմազանությամբ և համադրված ենթադրություններով:

Հետմոդեռնիստական հատկանիշներ ունի նաև պատմական թեմատիկայով գրված ժամանակակից վեպը, որը վերլուծության նոր մոտեցում է պահանջում: 1987 թ. գրված «Սկսելով տեսականացնել հետմոդեռնը» էսսեում տեսաբան Լինդա Հաթչոնը, խոսելով հետմոդեռնիստական պատմավեպի մասին, առաջարկում է դրա քննության տեսությունն անվանել «պատմագրական մետագեղարվեստականություն» / «historiographic metafiction» եզրույթով[1]: Այս տեսությունը տեսաբանը շարունակել է զարգացնել իր «Հետմոդեռնիզմի պոետիկա» (1988) աշխատության մեջ:

Մեր նպատակն է ներկայացնել Լ. Հաթչոնի առաջարկած տեսությունը՝ անդրադառնալով պատմական իրադարձությունների մեկնաբանման խնդրին, գեղարվեստականի և իրականի, պատմական փաստի և անհատական փորձի փոխհարաբերություններին, պատմության և գրականության երկխոսությանը, միջտեքստայնության գործառույթին, հեղինակի ընտրության խնդրին: Խնդիրներն են՝ առանձնացնել պատմագրության, պատմավիպասանության և հետմոդեռնիստական պատմավեպի կառուցվածքային և գաղափարական հատկանիշները, հստակեցնել դրանց սահմանները, պատմագրական

[1] Եզրույթի թարգմանությունը մերն է՝ **Հ. Հ.**: Եզրույթը տեղայնացնելիս և տեսությունը հայերեն ներկայացնելիս որոշ դժվարություն է առաջացնում history և story եզրույթների փոխադրումը, քանի որ երկու տարբեր բառերի համար մենք ունենք մեկ՝ «պատմություն» եզրույթը: Շփոթից խուսափելու համար երբեմն history-ն կփոխադրենք «պատմական փաստ», իսկ story-ն՝ «պատում» եզրույթներով:

մետագեղարվեստականության տեսության ծիրում ցույց տալ ժամանակակից հետմոդեռնիստական պատմավեպի վերլուծության հնարավորությունները:

Պատմագրական մետագեղարվեստականության տեսությունը

Մինչ Հաթչոնի տեսության քննությունը փորձենք հասկանալ «պատմագրական մետագեղարվեստականություն» / «historiographic metafiction» եզրույթի էությունը՝ վերլուծելով բառակապակցության բաղադրիչները՝ մետագեղարվեստական և պատմագրական գրականություն / metafiction and historical fiction: Մետագեղարվեստական գրականություն կարդալիս ընթերցողը հասկանում է, որ այն հեղինակային ստեղծագործություն է. հեղինակը ինքնատիպ լուծումներով ընթերցողին հաղորդակից է դարձնում աշխարհի տարբեր իրողություններին, իր ստեղծած ներքին աշխարհին, սեփական զգացմունքներին՝ օգնելով նրան չմոլորվել աշխարհը ճանաչելու և հասկանալու ճանապարհին: Հեղինակի խնդիրը զգացմունքներ առաջացնելն է: *Իսկ ի՞նչ է պատմագրությունը, և ո՞րն է պատմագրության ու պատմավեպի տարբերությունը:* Այս հարցին անդրադարձել է գրականագետ Տիգրան Սիմյանը՝ հիմնվելով Լիոն Ֆոյխտվանգերի հոդվածների վրա[2]: Ըստ Լ. Ֆոյխտվանգերի՝ պատմագրի տեքստը ծնվում է իր իսկ ժամանակաշրջանում. չկա ներքին հարցադրում՝ ուղղված անցյալին. նրա նպատակն է արձանագրել եղածը այնպես, ինչպես այն եղել է: Վիպասանը արձանագրում է իրողությունները՝ ըստ իր կամ տվյալ ժամանակաշրջանի արժեբանական համակարգի. արձանագրվածն ընտրվում է, իսկ յուրաքանչյուր ընտրություն սուբյեկտիվ է: Բացի այդ, նա ազատ է ընտրված նյութի նկատմամբ ցուցաբերել ստեղծագործական մոտեցում:

Երբ ասում ենք պատմագրություն (historiography)[3], հասկանում ենք որևէ դարաշրջանի, երկրի, ժողովրդի մասին գրված պատմական տեքստ, որը գիտական, գլխավորապես պատմական փաստերի վրա հիմնված ուսումնասիրություն է: Ի տարբերություն պատմագրության՝ պատմավեպում գեղարվեստական տարրերն ու հորինվածքը գերակշռում են: Տարբերությունը ոչ միայն ժանրային է, այլև գիտակարգային, գործառութային և գաղափարախոսական: Հայ գրականության մեջ պատմագրության ժանրի ստեղծումն ու զարգացումը թվագրվում է V դարից, իսկ պատմավեպինը՝ որպես վեպի ենթաժանր՝ XIX դարից:

Տարբեր ժամանակներում և պատմական տարբեր հանգամանքներում գրականագետները տարբեր սահմանումներ և մեկնաբանություններ են տվել պատմական վեպին, տարբեր չափանիշներ և գործառույթներ են վերագրվել պատմական վեպի ժանրին: Միևնույն ժամանակ, պատմավիպասանները, դիմելով պատմական վեպի ժանրին, հետապնդել են տարբեր նպատակներ: Ա-

---

[2] Տե՛ս **Միմյան Տ.** (2012): «Պատմության ու պատմագիտության մեթոդաբանական մի քանի խնդիրների շուրջ (Լ. Ֆոյխտվանգերի հոդվածների հիման վրա)» // Լրաբեր հասարակական գիտությունների, № 2-3, 100-113 էջեր: https://arar.sci.am/Content/39360/file_0.pdf

[3] Հարկ է հստակեցնել, որ մեր ուսումնասիրության ծիրում միայն պատմության գեղարվեստական տիրույթն է, ոչ թե գիտականը՝ պատմագիտությունը:

մեն դեպքում, պատմավեպը պատմությունը որոշակի նպատակի համար որոշակի ձևի մեջ դնելու երևույթ է, որը կապ է ստեղծում պատմական անցյալի և ներկայի միջև: Որպես կանոն՝ այդ կոնկրետ նպատակը թելադրվում է ժամանակաշրջանով և գրական զարգացումներով: Պատմավեպն ընդհանուր առմամբ ունեցել է զարգացման տարբեր փուլեր՝ արձագանքելով ժամանակի պատմական և գրական զարգացումներին. ժանրի բովանդակային և կառուցվածքային առանձնահատկությունները հիմնականում պայմանավորված են տվյալ ժամանակաշրջանի հրամայականով: Այս փուլերից յուրաքանչյուրը կարող է դառնալ ուսումնասիրության ուշագրավ թեմա: Հայ պատմավեպի պատմության մեջ պայմանականորեն կարելի է առանձնացնել երեք փուլ՝ փառահեղ պատմական անցյալի հակադրումը անփառունակ ներկային (Ռաֆֆի, Մուրացան, Ծերենց), պատմական (ողբերգական կամ փառահեղ) անցյալի զուգահեռումը ներկայի հետ (Ստեփան Զորյան, Դերենիկ Դեմիրճյան) և պատմական անցյալի վերլուծությունը՝ գոյաբանական խնդիրների տեսանկյունից (Վարդան Գրիգորյան, Վիգեն Խեչումյան, Պերճ Զեյթունցյան, Լևոն Խեչոյան): Այս վերջին փուլում պատմությունը գեղարվեստական գրականության մեջ կարծես կորցնում է իր ազգային նշանակությունը՝ ընդգրկելով ավելի լայն համատեքստեր և կառուցվածքային տարրեր: Գաղտնիք չէ, որ 1970-ականներից սկսած՝ պատմավեպի ժանրը կտրուկ փոփոխությունների է ենթարկվել: Այս շրջանում հրատարակվել են Վիգեն Խեչումյանի «Գիրք լինելության» (1971), ապա Պերճ Զեյթունցյանի «Արշակ Երկրորդ»-ը (1977), որոնք ընթերցողական և քննադատական շրջանակներում հակադիր կարծիքների արտահայտման առիթ դարձան: Այս հեղինակներին մեղադրեցին պատմավեպի ժանրը ոչնչացնելու մեջ: Այսօրվա տեսանկյունից միանգամայն հասկանալի է, որ հեղինակները պարզապես նորարարներ էին, որոնք արդիականացրին պատմավեպի ժանրը: Պատմական վեպ գրելիս այս սկզբունքով են առաջնորդվել նաև նրանց հաջորդած հեղինակները: Բնականաբար, այս միտումը առանց արտաքին ազդեցությունների չի ձևավորվել: Պատմավեպի ժանրի արդիականացման առաջին քայլերն արձանագրվել են նաև եվրոպական գրականության մեջ 1970-ականներին՝ պատմական վեպում հետմոդեռնիստական տարրերի ներմուծմամբ: 1980-ականների կեսերին եվրոպական գրականության մեջ ի հայտ եկել պատմական վեպի բոլորովին նոր ժանր, որը շարունակում է զարգանալ՝ իր վրա կրելով ժամանակի զարգացումների կնիքը:

Ավելի ուշ շրջանում առաջ եկած հետմոդեռնիստական պատմավեպերը պատմագրության և գեղարվեստի խաչմերուկում են. հետմոդեռն հեղինակները, պատմություն պատմելուն զուգահեռ, կասկածի տակ են դնում պատմություն գրելու եղանակները, խառնում են փաստն ու հորինվածքը՝ ցույց տալով, որ պատմությունը միշտ սուբյեկտիվ է: Այս տեսակի պատմական վեպերը մենք հակված ենք անվանելու *մետապատմավեպ*՝ հաշվի առնելով դրա կառուցվածքային առանձնահատկությունները: Հաթչոնի առաջարկած *պատմագրական մետագեղարվեստականությունը մետապատմավեպի քննության*

ուշագրավ մոտեցում է, որն առաջարկում է քննել պատմական իրադարձության և դրա գեղարվեստական անդրադարձի հարաբերությունը՝ քննադատական հարթություն բերելով պատմական փաստը:

Պատմագրական մետագեղարվեստականությունը մարտահրավեր է նետում թե՛ պատումի ներկայացման պարզամիտ, ռեալիստական ըմբռնմանը, թե՛ գեղարվեստը աշխարհից ամբողջությամբ տարանջատող նույնքան պարզամիտ տեքստային կամ ձևապաշտական/ֆորմալիստական պնդումներին[4]: Այն ժանրային հիբրիդ ենթատիպ է, արվեստ է «արխիվի ներսում», և այդ արխիվը թե՛ պատմական է, թե՛ գրական:

Լ. Հաթչոնն իր «Հետմոդեռնիզմի պոետիկա» (A Poetics of Postmodernism) աշխատության մեջ[5] նախ արձանագրում է, որ պատմական թեմատիկայով գեղարվեստական արձակը (historical fiction) ավանդաբար ընկալվում է որպես ժանր, որը փորձում է վերարտադրել պատմական իրադարձություններն ու կերպարները՝ միաժամանակ պահպանելով փաստերի ու գեղարվեստական հորինվածքի միջև հավասարակշռությունը, ապա տեսաբանը խոսում է այդ հավասարակշռությունը կասկածի տակ դնելու անհրաժեշտության մասին, որն էլ անում է պատմագրական մետագեղարվեստականության տեսությունը՝ շեշտելով պատմագրության կառուցվածքային և հորինվածքային բնույթը: Այստեղ մեծ տեղ են գրավում միջտեքստայնության այնպիսի տեսակներ, ինչպիսիք են հեգնանքն ու պարոդիան:

Տեսաբանն ընդգծում է, որ պատմագրական մետագեղարվեստականությունը միաժամանակ հաստատում և վիճարկում է պատմության և գեղարվեստական հորինվածքի միջև եղած տարբերությունը: *Տեսության հիմնական դրույթն այն է, որ անցյալը եղել է, սակայն մենք այն ճանաչում ենք միայն տեքստերի միջոցով*[6]*:*

Պատմագրական մետագեղարվեստական ստեղծագործություններին բնորոշ են ստորև ներկայացվող մի շարք առանձնահատկություններ:

Պատմական փաստերի և հորինվածքի միաձուլում. այս վեպերը հաճախ խառնում են իրական պատմական դեպքերը հորինված կերպարների կամ սյուժետային գծերի հետ, ինչը բարդացնում է փաստի և հորինվածքի սահմանազատումը: Հաթչոնն ընդգծում է, որ պատմագրական մետագեղարվեստականությունը երկակի մոտեցում է ցուցաբերում պատմության նկատմամբ. այն մի կողմից ընդունում է պատմական իրողությունը, մյուս կողմից ցույց է տալիս, որ պատմությունը մեզ հասանելի է միայն գրական տեքստերի միջոցով:

---

[4] Տե՛ս **Hutcheon L.** (1988): A Poetics of Postmodernism: History, Theory, Fiction, New York and London: Routledge, էջ 6:

[5] Տե՛ս նույն տեղը, էջ 268:

[6] Տե՛ս **Hutcheon L.** (1989): "Historiographic Metafiction Parody and the Intertextuality of History" Intertextuality and Contemporary American Fiction. Ed. O'Donnell, P., and Robert Con Davis. Baltimore: Johns Hopkins University Press, էջ 3-32:

Պատմության նկատմամբ քննադատական հայացք. մեր գիտելիքը պատմության մասին միշտ միջնորդավորված է տեքստերի, փաստաթղթերի, հուշերի միջոցով, որոնք էլ ձևավորում են մեր պատկերացումները անցյալի մասին: Պատմագրական մետագեղարվեստականությունը ոչ թե ձգտում է պատմական ճշգրտության, այլ ցույց է տալիս, թե ինչպես են պատմական փաստերը ստեղծվում և ներկայացվում՝ կախված այն հարցադրումներից, որոնք մենք ուղղում ենք անցյալին: Այսպիսով, հարց է ծագում՝ կարող ենք արդյոք պատմական ճշմարտությանը լիովին հավատալ:

Ինքնանդրադարձ/ինքնավերլուծություն (Self-reflexivity). այս տեսակի ստեղծագործությունը ներառում է ինքնավերլուծություն. գրական գործում ոչ միայն ընդգծվում է պատմության կառուցվածքային բնույթը, այլև բացահայտվում է գեղարվեստական տեքստի ստեղծման ընթացքը: Օրինակ՝ նման գործերում հաճախ նշվում են պատմական նյութի ընտրողականությունը, փաստերի մեկնաբանելիությունը և նույնիսկ պատմական աղբյուրների անհուսալիությունը, ինչի շնորհիվ ընթերցողը գիտակցում է, որ պատմությունը ձևավորվում է ըստ այն պատմողի, ով այն ներկայացնում է:

Տիպական հերոսների և պատմական անձանց վերաիմաստավորում. պատմագրական մետագեղարվեստականությունը հաճախ վերակառուցում է անցյալի կերպարները, սակայն նրանց չի ներկայացնում որպես համընդհանուր կամ տիպական հերոսներ, ինչպես նրանք ներկայացված են դասական պատմական վեպերում: Հաթչոնը նշում է, որ հետմոդեռնիստական վեպերում հերոսները հաճախ խախտում են պատմական «տիպականության» գաղափարը՝ դառնալով բազմաշերտ ու դինամիկ կերպարներ:

Միջտեքստայնություն. նման վեպերում հաճախ տեղ են գտնում գրական այլ ստեղծագործությունների և պատմական տեքստերի հղումներ, փոխներթափանցումներ՝ ցույց տալու համար, որ պատմությունը երբեք անկախ չէ մշակութային ու գրական ազդեցություններից:

Հետմոդեռնիստական պատմագրական մետագեղարվեստականությունը, ըստ Հաթչոնի, մերկացնում է պատմագրության գաղափարական կողմը. պատմությունը ներկայացնելը քաղաքական ակտ է, և լեզուն, որի միջոցով դա արվում է, երբեք թափանցիկ չէ: Այդ իսկ պատճառով գեղարվեստական նման տեքստերը մերկացնում են պատմության մեջ ներառված իշխանական ու գաղափարական խոսույթները: Նա նաև հիշեցնում է, որ հետմոդեռն այդ մոտեցումը համընկնում է ժամանակակից պատմագրական տեսությանը, որն անցյալը ներկայացնում է ոչ թե որպես իրականություն, այլ որպես տեքստային վերարտադրություն՝ նարատիվ: Հաթչոնը եզրակացնում է, որ հետմոդեռն պատմագրական մետագեղարվեստականությունը չի ջնջում անցյալի գոյությունը, այլ մերժում է այն՝ որպես միանշանակ «ճշմարտության» աղբյուրի: Այդ գրականությունը հորդորում է վերլուծել և հասկանալ, թե ինչպես ենք ճանաչում անցյալը, ինչու ենք որոշակի նարատիվներ վերապրում, և ինչպես է այդ ճա-

նաչողությունը պայմանավորված արդեն գոյություն ունեցող լեզվամշակութային կառույցներով: Իսկ ինչպե՞ս են հարաբերվում պատմական փաստը և գեղարվեստական մտահղացումը: Լինդա Հաթչոնն առաջ է քաշում պատմագրական սկզբունքներից բխող մի քանի հիմնական գաղափար:

Պատմական փաստերն ու գրականությունը փոխկապակցված են. Հաթչոնը պնդում է, որ և՛ պատմությունը, և՛ գեղարվեստական գրականությունը վերարտադրություններ/ռեպրեզենտացիաներ են, այսինքն՝ դրանք ոչ թե անմիջականորեն արտացոլում են իրականությունը, այլ կառուցում են այն. երկուսն էլ ունեն նույն նարատիվ կառուցվածքը, հետևաբար պատմությունն ինքնին մետաֆիկցիա է: Օրինակ՝ Վահագն Գրիգորյանի «Պողոս-Պետրոս», «Ժամանակի գետը» վեպերում օգտագործվում են ինչպես փաստաթղթային նմուշներ (լուրեր, դատական արձանագրություններ), այնպես էլ գեղարվեստական հիշողություններ, որոնց միջոցով վերապատմվում են խորհրդային բռնաճնշումները՝ միաժամանակ ներկայացնելով հոգեբանական, լեզվաբանական ու հիշողության խեղաթյուրումները: Այս կերպ պատմությունը դադարում է սոսկ փաստերի արձանագրում լինելուց. այն ընկալման ավելի լայն դաշտ է դառնում:

Պատմագրական մետագեղարվեստականությունը «բացահայտում է» պատմության կառուցված լինելը. ըստ Հաթչոնի՝ այս տիպի վեպերը (Հաթչոնը բերում է Ումբերտո Էկոյի «Վարդի անունը» և Ջուլիան Բարնսի «Պատմության զգացումը» գործերի օրինակը) ցույց են տալիս, որ պատմական փաստերը չեն կարող ամբողջությամբ վերարտադրվել, այլ միշտ ենթակա են մեկնաբանման: Ինչպե՞ս է բացահայտվում պատմության կառուցված լինելը: Վեպում պատմական իրադարձությունները ներկայացվում են տարբեր կերպարների հիշողությամբ և մեկնաբանությամբ, որոնք հաճախ իրար հակասում են:

Գեղարվեստական մտահղացումը հարցականի տակ է դնում պատմության ճշմարտացիությունը. վեպերը հաճախ խաղում են փաստերի հետ՝ ներկայացնելով տարբեր նարատիվներ, պարոդիայի կամ մետատեքստի միջոցով ցույց տալով իրականի ու գեղարվեստականի սահմանները: Այս տեքստերը չեն վստահում պաշտոնական պատմությանը, փոխարենը վերաիմաստավորում են այն՝ հերոսների հիշողության, տրավմայի, տեղային պատմությունների միջոցով:

Միջտեքստայնությունը ստեղծում է պատմության բազմաձայնություն. ինչպես նշեցինք, Հաթչոնի տեսության մեջ կարևոր տեղ ունեն միջտեքստային տարաձև դրսևորումները՝ տարբեր պատմությունների, փաստերի ու նարատիվների փոխազդեցությունը, փոխներթափանցումը: Տեքստերը, որոնք ներգրավվում են պատմագրական մետագեղարվեստականության մեջ, կարող են լինել ինչպես դասական պատմագիտական աղբյուրներ, այնպես էլ մշակութային կոդեր, առասպելներ և անգամ գրական հանրահայտ գործեր: Դա թույլ է տալիս հեղինակներին անցյալը ներկայացնել որպես տեքստերի խաչաձև հոսք՝ պատմության քարացած ճշմարտացիության նկատմամբ ձևավորելով թերահավատ ու քննադատական մոտեցում:

Հաթչոնը, ի տարբերություն Կրիստևայի և Բարտի[7], կարևորում է միջտեքստայնության ոչ միայն գեղարվեստական, այլև քաղաքական հղումները: Ըստ Հաթչոնի՝ հետմոդեռնիստական միջտեքստայնությունը քաղաքական գործիք է, քանի որ գեղարվեստական հղումները սոսկ գեղագիտական խաղ չեն, այլ բացահայտում են գաղափարախոսական գործողություններ, մշակութային իշխանության կառուցվածքներ: Ի՞նչ նկատի ունի Հաթչոնը՝ «մշակութային իշխանության կառուցվածքներ» ասելով: Մշակութային իշխանության կառուցվածքի համաձայն՝ որոշվում են, թե ո՞ր տեքստերն են համարվում «դասական», ովքե՞ր են հեղինակները (ո՞ր ժամանակաշրջանի և մշակույթի կրող են), ո՞ր ժանրերն են համարվում «բարձր», իսկ որոնք՝ «ցածր» (օրինակ՝ վե՞պ, թե՞ կոմիքս), ինչպե՞ս են ներկայացվում պատմությունները՝ բացարձակ ճշմարտությա՞ն, թե՞ մետահուշերի տեսքով: Հաթչոնը ցույց է տալիս, որ հետմոդեռնիստական գրականությունն ու արվեստը նախորդ տեքստերին, ժանրերին կամ գաղափարներին հղում անելիս միայն «հարգանքի տուրք» չեն մատուցում, այլ նաև հարցականի տակ են դնում դրանց *հեղինակությունն ու ճշմարտացիությունը,* բացահայտում են, թե ինչպես են այդ *նախատեքստերը կառուցել կամ պահպանել իշխանական հիերարխիաներ:* Հետմոդեռնիստական տեքստը, հղում անելով որոշակի ավանդույթների, կարող է բացահայտել ու քանդել այն ուժային համակարգերը, որոնք որոշել են, թե որ պատմություններն են արժանի հիշվելու, կամ ում ձայնը պիտի հնչի: Ըստ այդմ՝ միջտեքստայնությունը երբեք «անմեղ» չի լինում. հղում կատարելը ընտրություն է: Իսկ այն, թե ում կամ ինչին ես հղում անում, արդեն քաղաքական մոտեցում է, դիրքորոշում, քանի որ *կա՛մ վերարտադրում ես իշխող մշակույթը, կա՛մ խաթարում ես այն*[8]*:*

Հաթչոնը, հենվելով այլ տեսաբանների ուսումնասիրությունների վրա, հետմոդեռնիստական ստեղծագործություններում առանձնացնում է ժամանակակից գրական հետևյալ հնարքների/տեխնիկաների օգտագործումը՝ *հեգնանք (Irony), պարոդիա և մետագեղարվեստականություն (parody and metafiction), պաստիշ (pastiche), ժամանակային աղավաղում (temporal distortion), պարանոյա (paranoia), փոխակերպման տեխնիկա/տրանսֆորմացիա (transformation), ֆրագմենտացիա (fragmentation)*[9]*:*

Նկատելի է, որ պատմական և գրական համատեքստերը այնքան էլ «հաշտ» չեն պատմագրական մետագեղարվեստականություն ունեցող տեքստերում: Իր մեկ այլ՝ «Պատմագրական մետագեղարվեստական պարոդիա և պատմության միջտեքստայնությունը» («Historiographic Metafiction Parody and the

---

[7] Տե՛ս **Кристева Ю.** (2000): Бахтин, слово, диалог и роман // Французская семиотика: от структурализма к постструктурализму. М.: ИГ Прогресс, էջ 427–457:

[8] Տե՛ս **Plett H. F.** (1991): Intertextuality, Print Book, English, էջ 225–236:

[9] Տե՛ս **Hutcheon L.** (1988): The Canadian Postmodern: a Study of Contemporary English-Canadian Fiction. Toronto, New York: Oxford University Press, – 230 էջ:

Intertextuality of History»[10]) հոդվածում Լ. Հաթչոնը նշում է, որ հետմոդեռնիստական վեպում և՛ գեղարվեստական, և՛ պատմագրական պայմանականությունները միաժամանակ օգտագործվում և չարաշահվում, տեղադրվում և տապալվում, պնդվում և հերքվում են: Միջտեքստային գրապատմական խաղարկման, ծաղրանմանակման միտումը միանգամայն համահունչ է հետմոդեռնիզմի պարադոքսալ բնույթին: Հաթչոնը վեպերի այս կատեգորիայի մեջ է ներառում «Հարյուր տարվա մենություն», «Ռեգթայմ», «Ֆրանսիացի լեյտենանտի կինը», «Վարդի անունը» և այլ երկեր: «Սրանք բոլորը հանրաճանաչ և ծանոթ վեպեր են, որոնց մետագեղարվեստական ինքնանդրադարձը և միջտեքստայնությունը խնդրահարույց են դարձնում պատմական ճշմարտության վերաբերյալ անուղղակի պնդումները»[11]: Հիշեցնելով բորխեսյան պնդումը, որ և՛ գրականությունը, և՛ աշխարհը հավասարապես գեղարվեստական իրողություններ են, Հաթչոնը հավելում է, որ պատմագրական մետագեղարվեստական գրականությունը աշխատում է իրեն տեղավորել պատմական խոսույթի մեջ՝ չզիջելով իր գեղարվեստական ինքնավարությունը. այն հեգնական պարոդիայի տեսակ է, որում պատմության և գեղարվեստական գրականության ինտերտեքստերը զուգահեռ (թեև ոչ հավասար) կարգավիճակ են ստանում թե՛ «աշխարհի», թե՛ գրականության տեքստային անցյալի պարոդիկ վերամշակման մեջ: Հարկ է նշել, որ հեգնանքը հետմոդեռն պարոդիայի միակ ազդանշանը չէ: Գրականագետները, քննելով գեղարվեստական երկերում պարոդիայի դրսևորումները, խոսում են նաև պատմական «փաստերի» ընտրողականության և սուբյեկտիվության մասին:

Միջտեքստայնության միջոցով պատմագրական մետագեղարվեստականությունը, խախտելով ավանդական պատմագրության սահմանները, հնարավորություն է ստեղծում գրականության և պատմության վերաիմաստավորման՝ ձևավորելով հների վրա հիմնված նոր նարատիվներ: Ընթերցողին տրվում է միաժամանակ պատմական և գեղարվեստական փորձառություն, որը դառնում է ինքնավերլուծական բազմաշերտ քննություն: Հակադրվելով հետմոդեռն գրականությունը ապապատմական համարող տեսաբաններին (Իգլթոն, Ջեյմսոն, Նյումեն)՝ Լ. Հաթչոնը պնդում է, որ հետմոդեռնիզմը, պատմությունը կասկածի տակ դնելով, հեգնելով և վերաիմաստավորելով ավելի պատմական է, քանի որ ցույց է տալիս, որ պատմությունը որևէ հստակ «ճշմարտության» թափանցիկ արձանագրություն չէ: Պատմական փաստերի և գեղարվեստական մտահղացման փոխգործակցության արդյունքում ստեղծված գրականությունը կարող է պատմության վերաբերյալ խորքային հարցեր բարձրացնել՝ բացահայտելով դրա բազմակողմանի ու հակասական բնույթը:

---

[10] Տե՛ս **Hutcheon L.** (1989): “Historiographic Metafiction Parody and the Intertextuality of History”...

[11] Նույն տեղում, էջ 3:

Եզրակացություններ

Այսպիսով՝ պատմագրական մետագեղարվեստականությունը հետմոդեռնիզմի և պատմագրության սահմանին գտնվող գրական մոտեցում է, որը կարևորում է գեղարվեստական տեքստի կառուցվածքը, վավերականությունը և ընկալման մեխանիզմները: Քննադատելով պատումի ավանդական ընկալումները՝ այն ցույց է տալիս, որ թե՛ պատմությունը, թե՛ գեղարվեստական արձակը կառուցվածքային և գաղափարական իրողություններ են, որոնք ձևավորվում են հասարակական և մշակութային համատեքստում, ստեղծվում են տվյալ ժամանակի և անձի ընկալումների համաձայն:

Ընդհանրացնելով կարող ենք նշել, որ պատմագրական մետագեղարվեստականության մեջ *պարոդիան* գործում է որպես կրկնության ու տեքստի բացման միջոց, *միջտեքստայնությունը* թույլ է տալիս միաժամանակ հաստատել և մերժել համատեքստերը, *պատմությունը* ներկայացվում է նարատիվի, ոչ թե փաստերի փոխանցման միջոցով, *լեզուն* բացահայտվում է որպես գաղափարախոսական միջավայր, *իրականությունը* ճանաչվում է միայն տեքստերի միջոցով. այն «մշտապես տեքստայնացված» է:

Հաթչոնի պատմագրական մետագեղարվեստականության տեսությունը կարևոր է, քանի որ այն ոչ միայն անդրադառնում է գրականության ներսում տեղի ունեցող փոփոխություններին, այլև նոր լույսի ներքո է դիտարկում պատմագրության և գրականության փոխհարաբերությունը: Ընդ որում, պատմությունն այլևս չի մեկնաբանվում որպես օբյեկտիվ անցյալ, այլ որպես նարատիվային կառույց՝ ցույց տալով, որ պատմության մեջ չկա կենտրոնացված ճշմարտություն, այլ կան անվերջ տարբերակներ, վերարտադրություններ, նարատիվներ: Այս տեսությունը նաև ցույց է տալիս, որ պատմությունն ու գրականությունը փոխկապված են, և որ պատմության ներկայացումը չի կարող լինել չեզոք կամ լիովին վավերական: Հեղինակ-տեքստ վիճարկվող հարաբերությունները փոխարինվում են ընթերցող-տեքստ հարաբերություններով: Պատմագրական մետագեղարվեստականությունը ընթերցողից պահանջում է ոչ միայն իմանալ պատմական ու գրական անցյալի տեքստային նշանները, այլ նաև նկատել՝ այդ նշանները ինչպես են «խեղաթյուրվել» հեգնանքի կամ պարոդիայի միջոցով:

АСМИК АКОПЯН – ***Теория историографической метапрозы как методология изучения постмодернистского исторического романа.*** – В статье рассматривается теория постмодернистского анализа исторического романа, предложенная канадским теоретиком Линдой Хатчеон. В 1988 году теоретик предложила термин «историографическая метапроза» как эффективный способ исследования романа, сочетающего историю и вымысел, раскрывающего историю как сконструированное повествование, а не как абсолютную истину. Историографическая метапроза сочетает в себе элементы исторического романа и метапрозы. Произведения такого типа часто подвергают сомнению объективность изложения истории, подчёркивая, что история текстуальна, конструируется посредством нарративов и подвержена субъективным интерпретациям. Сохраняется художественная автономия, и в то же время текст возвращается в «мир», но не в «обыденную реальность», а в «мир» дискурса, в «мир» текстов и

интертекстов. Этот тип романа самоанализирует, принимает свою собственную художественную природу, подвергает сомнению историческую истину и историописания. Он использует интертекстуальные, пародийные и языковые игровые приёмы для исследования формирования исторических нарративов и оспаривания традиционных различий между историей и вымыслом. Исследование актуально в армянском литературоведении, поскольку предложенная Л. Хатчеоном теория может стать важным инструментом при изучении исторических романов постмодернистского толка, написанных после обретения независимости, в частности послевоенного периода.

Ключевые слова: *постмодернизм, интертекстуальность, Линда Хатчеон, историографическая метапроза, исторический метароман*

HASMIK HAKOBYAN – *The Theory of Historiographic Metafiction as a Methodology for Examining the Postmodern Historical Novel*.– The article examines the theory of postmodern historical novel analysis, which was put forward by Canadian theorist Linda Hutcheon. In 1988, the theorist proposed the term "historiographic metafiction" as an effective way to examine a novel that combines history and fiction, revealing history as a constructed narrative rather than absolute truth. Historiographic metafiction combines elements of the historical novel and metafiction. Works of this type often question the objectivity of the presentation of history, emphasizing that history is textual, constructed through narratives, and subject to subjective interpretations. Artistic autonomy is maintained, and at the same time the text is returned to the "world", but not to "ordinary reality", but to the "world" of discourse, to the "world" of texts and intertexts. This type of novel is self-analytical, accepting its own artistic nature, questioning historical truth and the writing of history. It uses intertextual, parodic, and language-game techniques to examine how historical narratives are formed and to challenge traditional distinctions between history and fiction.

The study is relevant in Armenian literary studies, as the theory proposed by L. Hutcheon can become an important tool in the examination of post-independence, particularly post-war, historical-themed novels of a postmodernist nature.

Key words: *postmodernism, intertextuality, Linda Hutcheon, historiographic metafiction, historical metanovel*

Գրականության ցանկ/Refernences

Hutcheon L. (1988): A Poetics of Postmodernism: History, Theory, Fiction, New York and London: Routledge, p. 268.

Hutcheon L. (1988): The Canadian Postmodern: a Study of Contemporary English-Canadian Fiction. Toronto, New York: Oxford University Press, –230 p.

Hutcheon L. (1989): “Historiographic Metafiction Parody and the Intertextuality of History” Intertextuality and Contemporary American Fiction. Ed. O'Donnell, P., and Robert Con Davis. Baltimore: Johns Hopkins University Press. pp. 3-32.

Kristeva YU. (2000): Bakhtin, slovo, dialog i roman // Frantsuzskaya semiotika: ot strukturalizma k poststrukturalizmu / per. s fr., sost., vstup. st. G.K. Kosikova. M.: IG Progress, s. 427–457 (in Russian).

Plett H. F. (1991): Intertextuality, Print Book, English, pp. 225–236.

Սիմյան Տ. Պատմության ու պատմագիտության մեթոդաբանական մի քանի խնդիրների շուրջ (Լ. Ֆոյխտվանգերի հոդվածների հիման վրա) // Լրաբեր հասարակական գիտությունների, № 2-3, էջ 100-113: [Simyan T. 2012. Patmut’yan u patmagitut’yan met’vodabanakan mi k’ani khndirneri shurj (L. Foykhtvangeri hodvatsneri himan vra) // Lraber hasarakakan gitut’yunneri, № 2-3, 100-113]. https://arar.sci.am/Content/39360/file_0.pdf